ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

25 փետրվար, 2026 թվականի № 20-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆԿԱԽ ԳՆԱՀԱՏՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի փետրվարի 11-ի N Ռ/26 01-32 գրությունը և հաշվի առնելով Ընկերության գույքի շուկայական արժեքը մասնագիտացված անկախ գնահատողի կողմից տրված երակացության հիման վրա սահմանելու նպատակահարմարությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Սույն որոշման հավելված 1-ով նախատեսված՝ Ընկերությանը պատկանող գույքի շուկայական արժեքի սահմանման համար օգտվել անկախ գնահատողի ծառայություններից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

25 փետրվար, 2026 թվականի

ք. Երևան

Հավելված 1

Հանրային հեռարձակողի խորհրդի
25 փետրվար, 2026 թ. N 20-Լ որոշման

Հաստատում եմ՝

Հանրային հեռարձակողի
խորհրդի նախագահ
_____ Վ. Դարբինյան
25 փետրվար, 2026թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող և անկախ գնահատողի կողմից գնահատման ենթակա գույքի ցանկ

Հ/հ	Գույքի անվանումը	Չափման միավորը	Քանակը
1	2006 թվականի արտադրության Նիսսան Տիդա մակնիշի մարդատար տրանսպորտային միջոց (նույնացման համարը (VIN)՝ JN1CC11C47T004308)	հատ	1